

Նորից սնկի մասին



4



Անբնություն

6



7

Փրկեք մեր հոգիները



8

Շնչադիմակը՝ միշտ քեզ հետ

ISSN 1829-149X



9 771829 149003

ով իրագրելված է, նա թաշտամված է

արտակարգ թերթ

N 40 (313)

6.11.2009 - 12.11.2009

www.emergency.am

Հրշեջ-փրկարարների հանրապետական 8-րդ մրցումները



Նոյեմբերի 6-9-ը երեւանում կանցկացվեն փրկարարական եւ հրշեջ-կիրառական բազմամարտի հանրապետական 8-րդ մրցումները: Բազմամարտի անցկացման նպատակն է 77 տարածքում գործող հրշեջ-փրկարարական ջոկատների հրշեջ-փրկարարական աշխատանքներ իրականացնելու ունակությունների կատարելագործումը, հրշեջ-փրկարարական տեխնիկայի եւ սարքավորումների օգտագործման առաջավոր փորձի


փոխանակումը, հրշեջ-փրկարարական ջոկատների միջեւ որոնող-փրկարարական աշխատանքների իրականացման փորձի փոխանակումը: Միջոցառման արդյունքում կորոշվի նաեւ հրշեջ-փրկարարների ֆիզիկական եւ մասնագիտական պատրաստակամությունը, հասարակությանը կներկայացվեն հրշեջ-փրկարարի մասնագիտությունը եւ փրկարարական ջոկատների աշխատանքը, ինչպես նաեւ ի հայտ կբերվեն լավագույն

հրշեջ-փրկարարական ջոկատներն ու հրշեջ-փրկարարները: Փրկարարական խմբերն իրենց ունակություններն ու կարողությունները կդրսեւորեն հետեւյալ մրցաձեւերում.

- Փլատակներում փոքր մեխանիզացիայի կիրառում
- Ավտոտրանսպորտային վթար եւ առաջին բուժօգնություն
- Մարտական բացազատում հրշեջ ավտոմեքենայից ջուր տալով թիրախի վրա
- Եռածնկանի սանդուղքով վարժական աշտարակի երրորդ հարկի գրոհում
- Գրոհող սանդուղքով վարժական աշտարակի երրորդ հարկի գրոհում
- Ժայռային հատվածի հաղթահարում:

Ընդհանուր արդյունքներով եւ մրցաձեւերից 1-3 տեղեր գրաված խմբերը կպարգևատրվեն ԱԻՆ 7ՓԾ դիպլոմներով, հուշանվերներով: Կպարգևատրվեն առավել ակտիվություն ցուցաբերած խմբերի ղեկավարները եւ մրցավարները:

«Շանթ» հեռուստաընկերության եթերում Յուրաքանչյուր շաբաթ օր Նոյեմբերի 14-ից սկսած, ժամը 22:30-ին եթեր կհեռարձակվի «Արտակարգ ալիքի» նոր հեռուստահաղորդաշարը



2009 թ. առաջին ինն ամիսների արտակարգ դեպքերը

Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում արձանագրվել է 5312 արտակարգ դեպք, որից 2709՝ տեխնածին (51%-ը), 356՝ տարերային (6.7%-ը) եւ 2247՝ սոցիալ-կենցաղային (42.3%-ը) բնույթի:

Նշված ժամանակահատվածում գրանցվել է դեպքերի աննախադեպ նվազում թե՛ 2008 (641-ով, 10.8%-ով) եւ թե՛ 2007 թվականի համեմատ (490-ով, 8.4%-ով):

Թե՛ն նախորդ՝ 2007-2008 թթ. համեմատ տեխնածին արտակարգ դեպքերի զգալի նվազում է գրանցվել, տարերային եւ հատկապես սոցիալ-կենցաղային դեպքերը կտրուկ աճել են: Ընդ որում, հենց վերջիններիս դասում էր նվազում գրանցվել 2008 թ.՝ 2007 թ. համեմատությամբ:

Ուշագրավ են հաշվետու ժամանակահատվածի երրորդ եռամսյակի ցուցանիշները, որի ընթացքում գրանցվել է միանգամից երեք ռեկորդ. նվազագույն ցուցանիշ տեխնածին եւ

առավելագույն՝ տարերային արտակարգ դեպքերի 3-րդ եռամսյակների համեմատությամբ, ինչպես նաեւ՝ առավելագույն դիտարկվող ժամանակահատվածում՝ սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերի դասերում:



Արտակարգ դեպքերի հետեւանցով տարվա ինն ամիսների ընթացքում զոհվել է 343, տուժել՝ 4233 մարդ:

Եթե նախորդ տարիներին դիտարկվող ժամանակահատվածում զոհերի գերակշիռ մեծամասնությունը բաժին էր ընկնում ճանապարհատրանսպորտային

պատահարներին, ապա այս տարի գրանցվել է ցուցանիշների կտրուկ նվազում եւ՝ 2008, եւ՝ 2007թ. համեմատությամբ (համապատասխանաբար 53 եւ 23 դեպքերով): Չոհերի նվազում 2007-2008 թթ. համեմատությամբ գրանցվել է նաեւ հրդեհների դեպքում: Չոհեր չեն եղել փյուռումների, համաճարակների, գինամթերքի հայտնաբերման, պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգերի եւ տարերային արտակարգ դեպքերի ժամանակ:

Ինչպես եւ նախորդ տարիներին, այնպես էլ 2009 թ. ինն ամիսների ընթացքում առավելագույն տեղ են զբաղեցրել թունավորումները, ճանապարհատրանսպորտային պատահարներն ու հրդեհները, միայն այն տարբերությամբ, որ հրդեհները զիջել են թունավորումներին եւ ճՏՊ-ներին:

Ընդհանուր առմամբ, 2007-2008 թթ. համեմատությամբ 2009 թ. ինն ամիսների ընթացքում գրանցվեց ե՛ւ զոհերի, ե՛ւ տուժածների թվաքանակի նվազում:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Քայաստանի փրկարար ծառայությունը գանգահարեք 1-01, 1-12

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք չեն տվել, աշխատանքները կվերսկսվեն հեկտեմբերի 30-ին:

Մշուշում մոլորված

Յուրտեմբերի 30-ին, ժամը 20.00-ին Արագածոտնի մարզից ահազանգ է ստացվել, որ Բերքառատ գյուղի բնակիչ, 1974 թ. ծնված Արամ Կիրակոսյանը ժամը 19.00-ի սահմաններում գնացել է գյուղի դաշտեր՝ անասուններին փնտրելու, եւ մառախուղի հետեւանքով չի կարողանում վերադառնալ տուն:

Որոնողական աշխատանքներ իրականացնելու համար Ծաղկահովիտ գյուղի հրշեջ-փրկարարական ջոկատից դեպքի վայր է մեկնել 15 հրշեջ-փրկարար:

Ժամը 20.50-ի սահմաններում Ա. Կիրակոսյանը հայտնաբերվել է:

Լեռան ճանապարհին

Յուրտեմբերի 31-ին, ժամը 11.05-ին ահազանգ է ստացվել, որ Արագած լեռ տանող ճանապարհին՝ լճին հարակից տարածքում, միկրոավտոբուսը շրջադարձի ժամանակ հանդիպել է խոչընդոտի, չի կարողանում անաջ շարժվել, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Ժամը 11.50-ին դեպքի վայր է մեկնել Արագածոտնի մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարների ուժերով վտանգավոր ճանապարհահատվածից դուրս է բերվել «Մերսեդես-Սպրինտեր» մակնիշի 08 SL 654 պետհամարանիշի ավտոմեքենան՝ վարորդի եւ վեց ուղեւորների հետ:

Դեղորայքային թունավորում

Յուրտեմբերի 31-ին, ժամը 20.05-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորմամբ՝ անգիտակից վիճակում, Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Մեքենավարների 85 հասցեի բնակչուհի, 1979 թ. ծնված Ք. Սահակյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը միջին ծանրության է:

Նույն օրը, ժամը 23.00-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ մկնդեղի թունավորմամբ Ստեփանավանի հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Սուրբ Նշան փողոցի թիվ 22 տան բնակչուհի, 1939 թ. ծնված Ռ. Օլոյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է միջին ծանրության:

Թունավորում գազից

Նոյեմբերի 4-ին շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.36-ին բնական գազից թունավորումով իրենց է դիմել Լոռու մարզի Գուգարք գյուղի 10-րդ փողոցի թիվ 73 տան բնակչուհի, 1962 թ. ծնված Սվետլանա Աշուրյանը: Ստանալով առաջին բուժօգնություն՝ տուժածը հրաժարվել է տեղափոխվել հիվանդանոց:

Ջայռնաբերվել է դիակ

Նոյեմբերի 3-ին, Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ Ապարան քաղաքի Մաշտոցի 28 հասցեում գտնվող տան տանիքում հայտնաբերվել է կախված տղամարդու դիակ, եւ այն իջեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարների ուժերով տանիքից իջեցվել ու իրավապահներին է հանձնվել Ապարանի Բաղրամյան փողոցի թիվ 46 շենքի 46-րդ բնակարանի բնակիչ, 1989 թ. ծնված Արտյոմ Մովսիսյանի դին:

Նոյեմբերի 4-ին, ժամը 17.58-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Բագրատունյաց պողոտայի թիվ 56 շենքի 5-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսի ու դռան գանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները տանտիրոջ հարազատների ներկայությամբ բացել են նշված բնակարանի դուռը,

որտեղ հայտնաբերվել է 1930 թ. ծնված Ռոզա Անտոնյանի դին:

Մեքենան շրջվել է

Յուրտեմբերի 29-ին Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.10-ին Երեւան-Մեղրի ավտոմայրուղու 143-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, կան տուժածներ, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Վայոցի հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը: Դեռեւ չչարզված հանգամանքներում՝ «ՈւԱԶ» մակնիշի 13 SS 290 պետհամարանիշի ավտոմեքենան ընթացքի ժամանակ շրջվել է, ինչի հետեւանքով վարորդ, 1961 թ. ծնված Գրիգոր Մարգարյանը տեղում զոհվել է, իսկ ուղեւորներ՝ 3-ամյա Տարոն Մարգարյանը, 13-ամյա Ենոք Մարգարյանը եւ 1965 թ. ծնված Սամվել Գեւորգյանը, տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Վայոցի հիվանդանոց:

Յուրտեմբերի 30-ի առավոտյան Ս. Գեւորգյանը հիվանդանոցում մահացել է, իսկ երեխաների կյանքին վտանգ չի սպառնում:

Մեքենան ընկել է ձորը

Յուրտեմբերի 30-ին, ժամը 09.34-ին Թալին քաղաքի ոստիկանության բաժնից ահազանգ է ստացվել, որ Երեւան-Գյումրի մայրուղու 61-րդ կմ-ում՝ Դավթաշեն գյուղի մոտակայքում, տեղի է ունեցել ավտոմեքենա, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւ չչարզված հանգամանքներում՝ Գուրգեն Գրիգորյանին պատկանող «ԳԱԶ-31» մակնիշի 04 LL 130 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց մասից ու ընկել ձորը, ինչի հետեւանքով վարորդն ու ուղեւորն ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Յուրտեմբերի օգնությամբ ավտոմեքենայից դուրս են բերվել 1977 թ. ծնված

>>> 3

միջազգային լուրեր

Խոզի գրիպը նոր երկրներ է նվաճում

Անցյալ շաբաթ H1N1 գրիպի վիրուսի «զոոների» ցուցակում հայտնվել են Ուկրաինան, Բելոռուսը եւ Բալկանյան երկրները:



Բուլղարիայում բարձր ախտահան վիրուսով վարակվել է մոտ 100 հազար մարդ, հայտարարվել է համաճարակ: Հիվանդության նոր դեպքեր են արձանագրվել հարեւան Սերբիայում, լայնածավալ համաճարակի են պատրաստվում Խորվաթիայում: Բուլղարիայի Յամբոլ եւ Բուրգաս քաղաքներում փակվել են բոլոր դպրոցները, բնակիչներին պաշտպանիչ դիմակներ են բաժանում:

Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոն դիմել է մի շարք երկրների ղեկավարներին ու մի-

ջազգային կազմակերպությունների՝ օգնություն խնդրելով միասին պայքարելու երկրում բռնկված գրիպի համաճարակի դեմ: Ուկրաինայում խոզի գրիպից արդեն մահացել է 96 մարդ, այդ թվում՝ վեց բժիշկ եւ յոթ հոգի կին: Այդ մասին տեղեկացրել է երկրի առողջապահության նախարարությունը:

«Ուկրաինայի ազգային անվտանգությանն սպառնացող վտանգը պահանջում է ինձնից դիմել մերձավոր ընկերներից ու ռազմավարական գործընկերներին անհապաղ օգնություն տրամադրելու համար», - նման բովանդակությամբ նամակ է գրել Ուկրաինայի նախագահը Բելոռուսի, Հունգարիայի, Մոլդովայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, ԱՄՆ-ի նախագահներին, ինչպես նաեւ Եվրահանձնաժողովի նախագահին ու ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին: Առողջապահության նախարարության տվյալներով, Ուկրաինայում ընդհանուր առմամբ գրիպով վարակվել է 184 919 մարդ, որոնցից հոսպիտալացվել են 7 383-ը: Կառավարությունը կարանտին է հայտարարել երկրի արեւմտյան

հատվածի ինը շրջաններում:

Թուրքիայում գրանցվել է H1N1 վիրուսից մահացության 9-րդ դեպքը: Վիրուսի հերթական զոհն Անկարայի 65-ամյա մի բնակչուհի է: Նշենք, որ միայն նոյեմբերի 2-ին Թուրքիայում խոզի գրիպից մահացել է 5 մարդ:

Խոզի գրիպով վարակվածության 4 նոր դեպք է գրանցվել Վրաստանում: Այդ մասին նոյեմբերի 3-ին լրագրողների հետ համոզմամբ ժամանակ ստել է Վրաստանի համաճարակային հսկողության ազգային կենտրոնի տնօրենը: Ըստ նրա՝ գրանցված բոլոր նոր դեպքերի պատճառն այլ երկրներից վարակի ներմուծումն է: Վարակվածներից երկուսը Վրաստան են եկել Ուկրաինայից, մեկը Թուրքիայից եւ եւս մեկը Մեծ Բրիտանիայից: Հիվանդները գտնվում են բժիշկների մշտական հսկողության տակ:

Չինաստանում ավանդական բժշկության մասնագետներն ստեղծել են մի դեղամիջոց, որը կարող է բուժել H1N1 վիրուսի գրիպը երեք օրվա ընթացքում: Այս մասին տեղեկացրել է «Չայնա դեյլի» թերթը: Պեկինի ավանդական բժշկության վար-

չության պետ Տու Չփիտաուն հայտարարել է, որ նորաստեղծ դեղամիջոցը հատկապես արագ է ազդում երեխաների վրա: «Որոշ երեխաների բավարար կլինի ընդունել դեղամիջոցի երկու-երեք բաժնեչափ», - հայտարարել է նա: Այս դեղամիջոցն անվանվել են «Հակամրսածություն 2», որն արդեն իսկ հայտնվել է Պեկինի դեղատներում եւ արժե մեկ ԱՄՆ դոլարից էլ պակաս: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, սակայն, հրաշք դեղամիջոցի գոյության մասին տեղեկատվության դեռեւս չի տիրապետում, ուստի չի կարող տալ փորձագիտական եզրակացություն: Այսօրվա դրությամբ H1N1-ի գրիպի դեմ պայքարելու համար խորհուրդ են տրվում «Տամիֆլու» եւ «Ռելենգա» դեղամիջոցները:

«Միրինաե» փոթորիկը Կիեւնամում

Կիեւնամի տարածքում մուլեգոնո «Միրինաե» հզոր փոթոր-



իկն առնվազն 99 մարդու կյանք է խլել, տասնյակ մարդիկ համարվում են անհետ կորած: Երկրի կենտրոնական շրջաններում ուժեղ քամիներ եւ հեղեղները սարսափելի ավերածություններ են գործել: փլուզվել կամ վնասվել է ավելի քան ինը հազար բնակելի տուն:

Ինչպես հայտնում են միջազգային լրատվամիջոցները, տեղական իշխանությունները դիմել են կառավարությանը՝ փրկարարական ուղղաթիռներ ուղարկելու եւ բնակչությանը տարահանելու համար:

Փողը հարձակվել է լրագրողի վրա

Տանգանիայում մանկական հաղորդման նկարահանումների ժամանակ փողը հարձակվել է BBC-ի աշխատակցի վրա, ինչի հետեւանքով 38-ամյա Անտոն Թերները մահացել է: Թերներն արեւադարձային ճանապարհորդությունների ժամանակ օգնել է BBC-ի լրագրողներին:

Սկարահանումներին մասնակցել է նաեւ երեք երեխա, որոնք չեն տուժել: Դեռեւս չի պարզվել, թե ինչու է փողը իրեն այդպես ագրեսիվ պահել ու հարձակվել նկարահանող խմբի անդամների վրա:

Ցախնա Թյունիբայան



<<< 2 Գ. Գրիգորյանը եւ ուղեւոր՝ 1992 թ. ծնված Վրեժ Գրիգորյանը:
Տուժածները տեղափոխվել են Թալինի հիվանդանոց: Վ. Գրիգորյանը, ստանալով բուժօգնություն, դուրս է գրվել հիվանդանոցից, իսկ Գ. Գրիգորյանը տեղափոխվել է Երեւան:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 21 դեպք

Հրդեհի չորանցում

Հոկտեմբերի 29-ին Տավուշի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 16.34-ին հրդեհ է բռնկվել Բերդ քաղաքի Առդան տարածքում:
Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 17.30-ին, մարվել՝ 20.00-ին:
Գ. Աթոյանին պատկանող չորանցում այրվել է 150 խմ մանրահատակ:

Այրվել է ավտոմեքենա

Հոկտեմբերի 31-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 20.15-ին հրդեհ է բռնկվել Գյումրի-Երեւան ավտոմայրուղու 20-րդ կմ-ում՝ չգործող բենզալցակայանին հարակից տարածքում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.25-ին, մարվել՝ 21.00-ին:



Ամբողջությամբ այրվել է «ՎԱՐ-ՈՒԲ» ՍՊԸ-ին պատկանող «ԳԱԶել» մակնիշի 2111 L պետհամարանիշի ավտոմեքենան:

Այրվել է փանիք

Հոկտեմբերի 31-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 21.58-ին հրդեհ է բռնկվել Օշական գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 74 տանը:
Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 22.55-ին, մարվել՝ 23.15-ին:
Այրվել է Դ. Խաչատրյանին պատկանող տան տանիքը՝ 25 քմ մակերեսով:

Հրդեհի փայտամշակման արտադրամասում

Նոյեմբերի 1-ին, ժամը 07.51-ին հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզում՝ Եղվարդի Երեւանյան 74 հասցեում գտնվող «Ատաղծագործ» փայտամշակման արտադրամասում:
Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 08.06-ին, մարվել՝ 09.20-ին:
Այրվել է արտադրամասի պահեստի՝ 130 քմ մակերեսով տանիքը եւ 8 խմ տախտակ:

Խոհանոցում

Նոյեմբերի 1-ին, ժամը 15.09-ին ահազանգ է

ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Եղիշե Թաղետոյան 10/35 հասցեում:
Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.21-ին, մարվել՝ 15.23-ին:
Ֆ. Ներսիսյանին պատկանող բնակարանի խոհանոցում այրվել է 2 քմ մակերեսով կահույք:

Այրվել է փայտե տաղավար

Նոյեմբերի 2-ին, ժամը 19.12-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Լոռու մարզում՝ Վաճառորի Սանկտ-Պետերբուրգ փողոցի թիվ 21 տան մոտակայքում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.21-ին, մարվել՝ 19.35-ին:
Բակուն այրվել է փայտե տաղավար՝ 6 քմ մակերեսով:

Այրվել է փուն

Նոյեմբերի 3-ին, ժամը 03.05-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Ըրկեւանց բնակավայրում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 04.05-ին, մարվել՝ 06.00-ին:
Ամբողջությամբ այրվել է Գ. Կոստանյանին պատկանող տունը եւ գույքը՝ 216 քմ ընդհանուր մակերեսով:

Հրդեհի հացափայտ

Նոյեմբերի 3-ին, ժամը 03.45-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 04.05-ին, մարվել՝ 06.25-ին:
Այրվել է Ի. Ավետիսյանին պատկանող՝ 15 քմ մակերեսով հացատան տանիքը եւ գոմում կուտակված 25 խմ աթարը:

Այրվել է վագոն-փնակ

Նոյեմբերի 3-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 20.24-ին հրդեհ է բռնկվել Գյումրիի Գայի փողոցում՝ նախկին մանկավարժական ինստիտուտին հարակից տարածքում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.40-ին, մարվել՝ 21.00-ին:
Ամբողջությամբ այրվել է ոչ բնակելի վագոն-տնակ՝ 18 քմ մակերեսով:

Այրվել է խոփ

Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ նոյեմբերի 3-ին, ժամը 19.45-ին հրդեհ է բռնկվել Սաղունց գյուղում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.20-ին, մարվել՝ 01.15-ին:
Թ. Կարապետյանին պատկանող տան բակում այրվել է պահեստավորված 2600 հակ խոփ:

Հրդեհի ավտոմեքենայում

Նոյեմբերի 5-ին, ժամը 06.22-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Աբովյան փողոցի 22ա շենքի բակում:
Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է ժամը 06.54-ին:
Մասամբ այրվել է Ա. Առաքելյանին պատկանող «Մերսեդես» մակնիշի 19 SO 454 պետհամարանիշի ավտոմեքենան:

Հայտարարություն

Ս.թ հոկտեմբերի N39 (312) Արտակարգ թերթում հայտարարված Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմի Առաջին բաժնի գլխավոր մասնագետի (ծածկա-

գիր 34/1-3.1-5) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի ժամը տեղափոխվել է նույն օրը՝ 04.12.2009 թ. ժամը 14:30-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է չորս ուժեղ երկրաշարժ: Հոկտեմբերի 29-ին 6.2 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Աֆղանստանի (Հինդուկուշ) Ֆեյզաբադ քաղաքից 75 կմ դեպի հարավ-արեւելք: Ստորգետնյա ցնցումները զգացվել են Տաջիկստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում, ինչպես նաեւ Ղազախստանի հարավում: Հոկտեմբերի 30-ին ճապոնիայի Ռյուկյու կղզիների շրջանում գրանցվել է 6.8 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Նոյեմբերի 2-ին Տոնգայի հարավային ափամերձ հատվածում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6.2 մագնիտուդ: Նոյեմբերի 4-ին Ատլանտյան օվկիանոսում՝ Ազորյան կղզիների տարածքում գրանցվել է 6.0 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Երկրաշարժերը ցունամիի չեն առաջացրել, զոհեր եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Հոկտեմբեր 29-ից նոյեմբերի 4-ը դիտված հիդրոդերեւութաբնական պայմանները ՀՀ-ում

Հոկտեմբերի 29-ին եւ նոյեմբերի 4-ին առանձին շրջաններում, հոկտեմբերի 30-ին եւ նոյեմբերի 3-ին՝ շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ՝ 2-14 մմ:
Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում՝ +18...+23 °C, Արարատյան դաշտում՝ +17...+20 °C, Լոռիում,

Տավուշում, Սյունիքի նախալեռներում եւ Արցախում՝ +15...+19 °C:
Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Լեռնային շրջաններում՝ -3...+2 °C, Լոռիում եւ Տավուշում՝ 0...+5 °C, Սյունիքի նախալեռներում՝ +1...+6 °C, Արարատյան դաշտում՝ +3...+8 °C, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +6...+10 °C:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում նոյեմբերի 6-ի գիշերն առանձին շրջաններում հնարավոր են տեղումներ, 6-ի ցերեկը, 7-ին եւ 10-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավարեւելյան՝ 2-7մ/վրկ: Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 6-ի գիշերը կնվազի 2-3 աստիճանով, 7-ի եւ 8-ի ցերեկը եւս նույնքանով՝ արեւելյան շրջաններում:





Նորից սնկի մասին



Սունկեր եղել են շարունակում է մնալ նրբահամ խորտիկ պատրաստելու ինքնատիպ բաղադրիչ: Այստեղ միայն մի խնդիր կա՝ ի տարբերություն այլ սննդամթերքների, սունկը, պահպանելով իր ախորժեղի արտաքին տեսքը, կարող է վտանգավոր կենսաբանական թույներ պարունակել: Այդպես, համեղ ընթրիքը շատերի համար վերածվում է ծանր փորձուքյան:

Սնկային թունավորումների մասին հիշատակումները հայտնի են դեռ անտիկ ժամանակներից: Իսկ ահա ժամանակակից աշխարհում սնկից թունավորվելու դեպքերը դիտվում են կամ որպես այդ սննդամթերքից օգտվելու տարրական կանոնների չհամապատասխանում, կամ՝ պարզապես սիրողական մոտեցում սունկ ասված «երեւույթին»:

Դժվար թե գտնվի մեկը, որ չի մտած, որ սնկերը լինում են ուտելու համար պիտանի եւ թունավոր: Սակայն այն, որ սունկը կարող է լինել նաեւ ուտելու համար պայմանական պիտանի, ամենայն հավանականությամբ, քչերը գիտեն:

Պարզվում է, Հայաստանի անտառներում աճող սնկերից ամենաանվտանգն են շամպինիոնն ու ծառի սունկը, սակայն այստեղ աճում են նաեւ շամպինիոնի նման այլ սնկեր, որոնք պայմանական

պիտանի սնկերի շարքից են:

- *Դրանք զատ են ծամդի-նիոնին եւ ամեն մեկը չի կարող այն տարբերել, -* ասում է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի՝ թունավորումների բաժանմունքի բժիշկ Աշխեն Ղազարյանը: - *Մարդիկ, լավ չճանաչելով դրանք, անտառներից հավաքում, խորովում, ուտում են եւ թունավորվում: Պայմանական դեպքերի սնկերն անհրաժեշտ է ֆաղելուց հետո երկար չդառնալ եւ զատ երեւույթին, -* ասում է նա:

Այս տարի սնկային թունավորումների թիվը անցած՝ 2008-ի համեմատ, աճել է մոտ երեք անգամ: Դա, ըստ հանրապետության գլխավոր թունաբան Միքայել Գաբրիելյանի, կարող է եկոլոգիայի փոփոխության հետեւանք լինել:

- *Թունավորում դեղիցը հիմնականում իրենց հավաքած սնկերից են լինում, -* ասում է Մ. Գաբրիելյանը: - *Երբ սնկից թունավորվածներին հարցնում են՝ ի՞նչ սունկ ես կերել, նրանք հիմնականում ասում են. «Այդ նույն սնկից անտառից միտս հավաքել, կերել եմ ու չեմք թունավորվել, իսկ այս անգամ թունավորվեցի»:* Որոշեալ հիմնական դաս՝ *ձառ եւ կարող եմ նույն էկոլոգիական փոփոխությունների ազդեցությունը սնկի որակի վրա, -* ասում է նա:

Իսկ ինչու՞ են անտառում աճող

սնկերը պատկանում պայմանական պիտանիների խմբին եւ ինչու է այն, փոխելով իր հատկությունները, դառնում թունավոր:

- *Անտառից հավաքած սնկերը որոշակի դայնամիկ առկայության կամ բացակայության դեղմունք առաջ փոխում են իրենց հատկությունները: Ընդհանրապես, սունկը ֆաղելուց հետո չի կարելի երկար դառնալ: Ժամանակի ընթացքում դրա մեջ սկսում են զարգանալ հարուցիչներ, ինչից հետո այն ուտելը դառնում է վտանգավոր մարդու առողջության համար, -* ասում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Աննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության՝ սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Արթուր Վարժապետյանը:

Ա.Վարժապետյանը տեղեկացնում է նաեւ, որ սունկը երկար ժամանակ արեւի ճառագայթների տակ վաճառատեղանին մնալու, կամ՝ ճզմվելու դեպքում, նույնպես փոխում է իր հատկությունները: Ուստի սպառողներին խորհուրդ է տալիս շուկայից սունկ գնելուց առաջ ուշադրություն դարձնել, որ վաճառվող սունկը մասնատված չլինի եւ ունենա վաճառքի արտոնագիր: Նա փաստում է, որ մեր շուկաներում գործող լաբորատորիաներն ի գործու չեն փորձաքննության ենթարկել եւ պարզել վաճառվող սնկի մեջ առկա թունավոր նյութերի քանակը, բայց կան հա-

մապատասխան մասնագետներ, որոնք արտաքին տեսքից լավ տարբերում են պիտանի սունկը վտանգավորից եւ տալիս են սունկի վաճառքի արտոնագիր:

- *Մինչեւ հիմա շուկաներում վաճառվող սնկից թունավորման դեղմունք, ինչքան ինձ հայտնի է, չեն գրանցվել, -* ասում է Ա.Վարժապետյանը, - *Եթե հանկարծ այնպես դասակարգվեցին, որ մարդը թունավորվի շուկայից գնած սնկից, ապա մեմֆ համադասարան միջոցներ կծեռնարկեն եւ կգնեն մեղավորներին:*

Այստեղ տեղին է հիշել՝ «Ուտելուց հետո մաղադանոսը հարկավոր չէ» ժողովրդական ասացվածքը: Լավ կլինի հնարավոր բոլոր միջոցները նախօրոք ձեռնարկել՝ նման դեպքերը բացառելու համար, քանի որ, ինչպես հանրապետության գլխավոր թունաբան է ասում.

- *Երբ սնկերը փոխում են իրենց հատկությունները, դրանց մեջ սկսում են կենսաբանական թույներ զարգանալ, որոնք զատ պայմանական են մարդու լյարդն ու երիկամները:*

Բժիշկները տեղեկացնում են, որ սնկից թունավորվելու առաջնային նշանները գլխապտույտի կամ սրտխառնոցի երեւույթներն են, ուստի նման դեպքերում խորհուրդ է տրվում անհապաղ խմել մեկ լիտր զով ջուր՝ առանց որեւէ խառնուրդի, կատարել ստամոքսի լվացում եւ անպայման դիմել բժշկի:

Վերջին չորս տարիների հայաստանի Հանրապետությունում սնկային թունավորումների վիճակագրություն

No	Տարեթիվը	Գրանցված դեպքերի թիվը	Տուժածների թիվը	Մահացությունների թիվը
1	2006 թ.	57	95	7
2	2007 թ.	29	50	2
3	2008 թ.	15	23	-
4	2009 թ. մինչեւ հոկտեմբեր ամիս	33	62	-

Սնկի զարմանահրաշ հատկությունների մասին

Երկրագնդի վրա սնկերի մոտ 250 հազար տեսակ կա, որոնցից միայն 5 տոկոսն է ուսումնասիրված:

Դրանց որոշ տեսակներ օգտագործվում են բժշկության մեջ: Սնկերի բուժիչ հատկությունների մասին մարդիկ իմացել են դեռելս 17-րդ դարում: Այն օգտագործել են նույնպես, խոլերայի, աղեստամոքսային եւ մաշկային հիվանդությունների բուժման համար:

ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Հնդկաստանի գիտնականների կարծիքով կան տեսակներ, որոնք պարունակում են քաղցկեղի բուժման համար անհրաժեշտ նյութեր:

Թունավոր սնկերից շատերն, օրինակ, բուժանյութեր են պարունակում, որոնց մասին գիտեն 20-կուտայի ու Կանադայի բնակիչները: Նրանք «մուխամոր» տեսակի սունկը, որի հայերեն անվանումը ճանճասպան է, օգտագործում են սուրբերկույրոգի, ռեմատիզմի, էկզեմայի, սկլերոզի բուժման համար:

Սնկերի որոշ տեսակներից ստացվում են նաեւ պսիլոցիբին եւ պսիլոցին կոչվող հոգեմետ նյութեր: Դրանք օգտագործվում են հոգեկան հիվանդությունների, հիշողության վերականգնման եւ կենտրոնական նյարդային համակարգի խանգարումների բուժման համար:

Սնկից պատրաստած կերակուրից թունավորվել են նաեւ պատմությանը հայտնի մարդիկ.

Հին հույն ողբերգակ Եվրիպիդեսի կինն ու երեխաները, Ներոն կայսեր անվտանգության ծառայության ղեկավար՝ Ապիոս Սեւերիոսը, Հռոմեական կայսր Կլավդիոսը, Կլիմենտ 7-րդ պապը, Ֆրանսիայի Կարլոս 6-րդ թագավորը:

Արմինե Գրիգորյան



Ղազար Մանուկյան

Իր ապրած հիսուն տարիներից 16-ը փրկարար ծառայության կապիտան Ղազար Մանուկյանը նվիրել է հրշեջի պատասխանատու եւ վտանգաշատ գործին: Ու ինչպես գործընկերներն են ասում՝ եւ լավ տիրապետում է գործին, եւ ամեն անգամ աշխատանքի է գալիս անտրտուն ու սիրով:

Շնորհավոր

- 1993 թվականին մեր գյուղում հրդեհ եղավ, մեծ հրդեհ էր: Տուն էր այրվում: Հրշեջներ եկան, կրակը մարեցին, մարդկանց փրկեցին, գույքը... Նայում էի ու հիանում: Ու մտածեցի. համ աշխատում ես, պետական ծառայող ես, համ էլ բարի գործ ես անում, օգնություն հասնում մարդկանց: Ու որոշեցի անպայման հրշեջ դառնալ: Նույն տարին ընդունվեցի Նուբարաշենի հրշեջ մասում աշխատանքի, որպես շարքային:

Երկու տարի անց, 1995-ին նա արդեն երեւանի թիվ 10 ՀՊՁ-ի պահակապետ է, պաշտոն, որ զբաղեցնում է մինչ օրս: Մեծ ու փոքր հրդեհների շիջման շատ է մասնակցել, նույնիսկ «շնորհակալություն» է ստացել ղեկավարության կողմից՝ բարդ ու վտան-

գավոր հրդեհը հնտորեն սանձելու համար:

- *Ամենասարսափելին, որ տեսել եմ կյանքումս՝ ավտոբուսի հրդեհն էր Նուբարաշեն-Բարձրաշեն խճուղու վրա: 1998 թվականի հունիսի 7-ին էր: Ժամը 19.25-ին կանչ ստացվեց, ու շտապ մեկնեցինք: ԿՎՁ ավտոբուս էր, մեկընամի, հիմա այդպիսի մարդատար ավտոբուս չկա, ու դա լավ է. շատ վտանգավոր ավտոբուս էր: Երբ տեղ հասանք, արդեն շատ երեխաների համել էին ավտոբուսից: Հետո իմացանք, որ էսկուրսիայից էին վերադառնում, ու այդ փոքր ավտոբուսում մոտ 50 մարդ էր եղել, չորս-հինգ ուսուցիչ, մնացածը՝ երեխաներ: Մեզ հաջողվեց փրկել հինգ երեխայի, բայց ցավոք յոթ երեխա զոհ գնաց այդ պատահարին: Տաք տարի է ան-*

ցել, բայց այսօր էլ հիշելիս մարմնովս սարսուռ է անցնում...

Մասնագիտական առումով դժվար հրդեհաշիջում էր 1999 թվականի փետրվարի 8-ինը: Ժամը 21.10-ին կանչ ստացանք ու մեկնեցինք Արարատի մարզի Բարձրաշեն գյուղ: Սեփական տան սեմյակներից մեկից առատ ծուխ էր դուրս գալիս, բայց կրակ չէր երեւում: Ընդամենը մեկ մարտական հաշվարկով էինք, ու եթե տունը բռնկվեր՝ դժվար թե տակից դուրս գային: Մինչեւ օգնությունը գար՝ կարող էր բանը բանից անցնել: Բայց ձեռքերը ծալած էլ չէր կարելի նստել: Խտեցինք, որ հենց սեմյակի դուռը բացենք՝ թթվածինը կնպաստի հրդեհի բռնկմանը: Հազանք կիպերը (այդպես ենք անվանում հակազազերը), որ կարողանանք աշխատել ծխապատ գոտում, ու դիրքավորվեցինք սեմյակի դռան եւ պատուհանի կողմից: Նախ բացեցինք դուռը: Ինչպես եւ սպասում էինք՝ կրակը բռնկվեց: Սկսեցինք

մարումը, շուտով նաեւ կտորեցինք պատուհանն ու երկրորդ փողոկից էլ ջուր տվինք կրակին: Ամեն ինչ ճիշտ հաշվարկված էր, ու հրդեհը կարողացանք արագ մարել: ույթի մեծ մասը փրկվեց: Այս հրդեհաշիջման համար ղեկավարության կողմից արժանացա «շնորհակալություն»:

Մենք էլ շնորհակալություն հայտնեցք Ղազար Մանուկյանին ու նրա բոլոր գործընկերներին՝ ամեն վայրկյան մարդկանց օգնության հասնելու պատրաստակամության ու հմուտ աշխատանքի համար եւ ավելացնեք, որ Փրկարար ուժերի վարչության ղեկավարության ու ամբողջ անձնակազմի անունից շնորհավորում ենք Ղազար Մանուկյանի հիսնամյակը, երկու զավակի հորն ու երկու թոռան պապիկին մաղթում ընտանեկան ամուր երջանկություն, փորձված ու հմուտ հրշեջին՝ անփորձանք աշխատանք, նաեւ առողջություն ու երկար տարիների կյանք:



Տնտեսության օբյեկտների կենսագործունեության կայունություն

Բնակչության և տարածքների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում

Օբյեկտի կայունության գնահատման մեթոդիկան

Օբյեկտի կայունության գնահատման նպատակն է հայտնաբերել արտադրական շինությունների, կառույցների, տեխնոլոգիական սարքավորումների ու հաղորդակցողիների առավել խոցելի տեղերը և առաջարկություններ պատրաստել ամբողջ օբյեկտի կայունության վերաբերյալ:

Օբյեկտի կայունության գնահատումը կատարվում է երկու փուլով: Առաջին փուլում կանխատեսման հիման վրա որոշում են այն հավանական իրադրությունը, որ կարող է ստեղծվել արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքում:

Հետագոտական խմբերի ստացած տվյալների վերլուծության հիման վրա օբյեկտի հանձնախումբը կազմում է զեկույց-տեղեկանք՝ համապատասխան աղյուսակների ու հաշվարկների հավելվածով, որոնք պետք է պարունակեն հետեւյալ ցուցանիշները:

• տեղանքի ռելիեֆի բնութագիրը, դրա վրա օբյեկտի, արտադրամասի ճյուղերի դիրքն ու դրանց վնասվելու բնույթի և աստիճանի կանխատեսումը:

• հարվածային ալիքի ներգործության նկատմամբ շենքերի, կառույցների, պահեստարանների, ապաստարանների և հակաճառագայթային ապաստարանների, տեխնիկայի ու տեխնոլոգիական սարքավորանքի, ինժեներական հաղորդակցողիների վիճակագրական կայունության գնահատումը:

• հնարավոր հրդեհավտանգ իրադրության գնահատումը:

• ճառագայթային (ռադիոակտիվ) իրադրության գնահատումը:

• արտադրության օբյեկտի վրա երկրորդային վնասող ներգործության գնահատումը:

• այն շենքերի ու կառուցվածքների գնահատումը, որոնք կարող են օգտագործվել մարդկանց պաշտպանելու համար, անհատական պաշտպանության միջոցներով նրանց ապահովվածությունը:

• նյութական արժեքների, արտադրանքի, հումքի, կիսաֆաբրիկատների ու պարենի պաշտպանության համար նախատեսված շենքերի և կառուցվածքների գնահատումը:

• արտադրության կառավարման կետի կապի ու ազդարարման միջոցների վիճակի գնահատումը:

Տեղեկանք-զեկույցն ընդհանրացվում է օբյեկտի աշխատանքի կայունությունը բարձրացնելու համար առաջարկվող միջոցառումների ցանկով:

Հետագոտությունների երկրորդ փուլում մշակում են օբյեկտի աշխատանքի կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների պլան, որը կատարում են առօրյա արտադրական գործունեության ընթացքում և արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի ժամանակահատվածում: Այդ պլանների իրական լինելու գործնական ստուգումը կատարվում է օբյեկտում քաղաքացիական պաշտպանության հատուկ կամ պլանային համալիր ուսումնասիրված ժամանակահատվածում:

Օբյեկտի աշխատանքի կայունության բարձրացման բոլոր միջոցառումները երկարաժամկետ են: Ուստի այդ միջոցառումների մի մասն ընդգրկում են տարեկան տնտեսական պլանի, մյուս մասը՝ օբյեկտի զարգացման հեռանկարային պլանի մեջ: Այդ միջոցառումների կատարումը պետք է երաշխավորված լինի ֆինանսական ու նյութական միջոցների հատկացումով և գտնվի օբյեկտի ՔՊ պետի հսկողության տակ:

Օբյեկտի բանվորների և ծառայողների ինժեներական պաշտպանության գնահատումը: Պատերազմական ժամանակներում բանվորների ու ծառայողների պաշտպանությունը քաղաքացիական պաշտպանության խնդիրն է: Սրա կատարման համար անհրաժեշտ է անցկացնել մի խումբ պաշտպանական միջոցառումներ, որոնք ներառեն մարդկանց պատասպարումն ապաստարաններում, հակաճառագայթային ու այլ պաշտպանական կառույցներում, անհատական պաշտպանության միջոցներով նրանց ապահովումը և տարահանման կազմակերպումը: Ինժեներական պաշտպանության գնահատման չափանիշ է ծառայում պաշտպանական կառուցվածքներով օբյեկտի ապահովվածությունը:


Օբյեկտի բանվորների ու ծառայողների ինժեներական պաշտպանության հարցերը քննարկելով անհրաժեշտ է ճշգրտել սույալ օբյեկտի դիրքը միջուկային հար-

ճական կառույցների պատասպարվողներ ընդունելու պատրաստվածությունը:

Միջուկային պայթյունի հարվածային ալիքի ներգործության գնահատումը:

Միջուկային պայթյունի հարվածային ալիքի ներգործության նկատմամբ էկոնոմիկայի օբյեկտների կայունությունը որոշելու չափանիշ է ավելցուկային ճնշման մեծությունը, որի դեպքում շենքերի, կառուցվածքների և ինժեներական հաղորդակցողիների տարրերը կամ պահպանվում են, կամ ենթարկվում թույլ և մասնակի ավերումների:

Գնահատումը սկսում են օբյեկտում սպասվող հարվածային ալիքի ճակատում ավելցուկային ճնշման մեծությունից: Կառույցի կայունությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել առավել խոցելի տարրերն ու տեղանասերը, որոնցից կախված է ամբողջ օբյեկտի աշխատանքը: Ընդ



վածների հնարավոր օբյեկտների նկատմամբ: Այս առումով օբյեկտները կարելի է պայմանականորեն բաժանել հետեւյալ խմբերի:

• օբյեկտներ, որոնք գտնվում են միջուկային վնասման օջախի հնարավոր ավերումների գոտում:

• օբյեկտներ, որոնք գտնվում են հնարավոր ավերածությունների գոտու սահմաններից դուրս, բայց ենթարկվում են արտակարգ վտանգավոր, վտանգավոր կամ ուժեղ ճառագայթակալի վարակման:

• օբյեկտներ, որոնք կարող են հայտնվել միայն չափավոր ճառագայթակալի վարակման կամ զլոբալ տեղումների ներգործության տակ:

Բերված դասակարգումը հաշվի առնելով՝ ինժեներական պաշտպանության գնահատման գործընթացում ուսումնասիրում են օբյեկտի աշխատակիցների պաշտպանական կառույցներով ապահովվածության աստիճանը, ապաստարանների, հակաճառագայթային պատասպարանների և բնակելի, արտադրական շենքերի ու պարզագույն թաքստոցների պաշտպանական հատկություններն այնպիսի հիմնական վնասող գործոնների նկատմամբ, ինչպիսիք են հարվածային ալիքն ու տեղանքի ճառագայթային վարակումը, յուրաքանչյուր պաշտպանական կառույցի տարողունակությունը, կենսապահովման համակարգի չափսերը, ՔՊ ազդանշաններով ազդարարման կազմակերպումն ու հուսալիությունը, որոշում են պաշտպա-

որում նրա կայունությունը որոշում են ըստ այն շենքի ու կառուցվածքի, որն ավերվում է ճնշման նվազագույն ավելցուկի դեպքում:

Գնահատման աշխատանքն ավարտելով՝ ձեռնամուխ են լինում այն միջոցառումների մշակմանը, որոնք անհրաժեշտ է անցկացնել միջուկային պայթյունի հարվածային ալիքի ներգործությանն առավել խոցելի շենքերի կամ կառուցվածքների կայունության բարձրացման համար:

Լուսային ճառագայթման ներգործության գնահատումը:

Լուսային ճառագայթման ներգործության նկատմամբ օբյեկտի կայունությունը գնահատում են այրմանը և հրդեհների առաջացմանը կառույցի դիմակայելու ունակությամբ: Կառույցի հրակայունությունն, ինչպես հայտնի է, կախված է ամենից առաջ շենքի կառուցման ժամանակ օգտագործված շինանյութերի որակական առանձնահատկություններից: Ըստ կրակի նկատմամբ կայունության բոլոր շինանյութերը բաժանվում են չայրվող, դժվար այրվող և այրվող տեսակների:

Ամենավտանգավորն այրվող նյութերից կառուցված շենքերը, շինություններն ու կառուցվածքներն են: Սակայն անգամ չայրվող նյութերից կառուցված շենքերն ու կառուցվածքները կարող են համեմատաբար ոչ տեսական ժամանակ դիմանալ կրակի կամ բարձր ջերմաստիճանների ներգործությանը: Կառուցվածքի հրակայունության սահմանը որոշվում է ժամով,

որի ընթացքում չեն հայտնվում միջանցիկ ճաքեր, ճեղքեր, և կառույցը չի կորցնում կրող ունակությունը, չի փլուզվում:

Հրակայուն տեսակին են դասվում աղյուսի, քարի և բետոնի շենքերն ու կառույցները, որոնց բոլոր մասերը չայրվող նյութերից են պատրաստված: Հակահրդեհային տեսակետից հատուկ վտանգ են ներկայացնում փայտից կառուցված շինությունները:

Լուսային ճառագայթման նկատմամբ օբյեկտի կայունությունը գնահատելիս ուշադիր ուսումնասիրում են հնարավոր այրման շառավղում գտնվող բոլոր շինությունները, ինչպես նաև վերլուծում են այն հետեւանքները, որոնք կարող են առաջանալ հրդեհից՝ հաշվի առնելով արտադրության բնույթն ու կառուցապատման խտությունը:

Ճառագայթակալի վարակման ներգործության գնահատումը:

Օբյեկտի աշխատանքն առաջին հերթին կախված է լինելու իր բանվորներին ու ծառայողներին իննացնող ճառագայթումներով ախտահարման և արդյունաբերության թողարկած արտադրանքի՝ ճառագայթակալի նյութերով վարակման աստիճանից: Կայունության որոշման չափանիշը ճառագայթահարման առավելագույն թույլատրելի բաժնաչափն է (դոզա), որը չի հանգեցնում մարդկանց աշխատունակության կորստի և ճառագայթային հիվանդության:

Այս գործոնների ազդեցության նկատմամբ օբյեկտի կայունության գնահատումը ներառում է շենքերի ու կառույցների կողմից ճառագայթման թուլացման գործակցի որոշումը: Իննացնող ճառագայթումից շենքերի ու կառույցների պաշտպանական հատկությունները գնահատելու արդյունքների հիման վրա մշակվում են ձեռնարկության բանվորների և ծառայողների պաշտպանության միջոցառումները:

Կառավարման, կապի և ազդարարման համակարգի կայունության գնահատումը:

Օբյեկտի կառավարումը ՔՊ ղեկավարության գործունեության հիմքն է՝ իր առջեւ դրված խնդիրները ժամանակին ու հաջող կատարելու հարցում: Կառավարման համակարգի կայունության չափանիշներն են կառավարման կետերի (ԿԿ) սարքավորվածությունն ու վիճակը, անձնակազմի, ԿԿ-ի և կապի հանգույցների (միջոցների) պաշտպանության հուսալիությունը, ԿԿ-ի կառուցվածքն ու հաշվարկների հնարավորությունները, կապի և ազդարարման համակարգի հուսալիությունը: Գնահատման ընթացքում որոշում են ավտոմատ հեռախոսային կայանի (ԱՀԿ) տիպն ու տարողությունը, ռադիոհանգույցի հզորությունը, դիսպետչերական կապի հնարավորությունները, ռադիո և լարային կապի միջոցների տեխնիկական վիճակը, ղեկավար կազմին ազդարարելու սխեմայի իրական լինելն ու հուսալիությունը, ձայնային և լուսային ազդանշաններ (շչակներ, բարձրախոսներ) տալու միջոցների տեղակայման տեղերն ու տեխնիկական վիճակը, հարվածային ալիքի ներգործությունից կապի հանգույցի և գծերի պաշտպանության հուսալիությունը, կապի շարժական միջոցների օգտագործման հնարավորությունը, տարբեր նյութերի, պահեստամասերի ռեզերվի առկայությունը:

Գնահատումն ավարտելուց հետո մշակվում են կառավարման, կապի ու ազդարարման համակարգի կայունությունը բարձրացնելու միջոցառումներ:

Հարունակությունը՝ հաջող համարում



Անքնուրթյուն

Մարդն իր կյանքի մոտ մեկ երրորդն անց է կացնում քնած վիճակում: Նորմալ է և լիարժեք քնի շնորհիվ է, որ մարդը կարողանում է կառավարելի ու հազգեցած դարձնել իր արթուն կյանքը: Շատ քչերը կարող են պնդել, որ գոնե մեկ անգամ չեն տառապել անքնությունից ու դրա հետևանքով օրն անցկացրել անտրամադիր, դժգոհ եւ անտանելի գլխացավով:

Մինչ անքնության անդրադարձնալ փորձենք հասկանալ, թե ինչ է քունը, ինչ դեր է նշանակություն ունի մեր կյանքում: Քնած մարդու օրգան-համակարգերի գործընթացները համեմատաբար դանդաղում են, փոքրանում է մկանային լարվածությունը, իջնում է արյան ճնշումը, շնչառությունը դառնում է ավելի դանդաղ, որոշ չափով նվազում է մարմնի ջերմաստիճանը (1-2 աստիճանով): Համագտի է անցնում նաեւ ուղեղը, սակայն դրա որոշ մասեր պահպանում են իրենց ակտիվությունը, ինչի վառ ասպարեզ են մեր երազները:

Քունը կազմված է 5 փուլերից՝ առաջինից չորրորդ փուլը կոչվում է օրթոդոքսալ քուն, իսկ հինգերորդը՝ պարադոքսալ: Այս փուլերը գիշերվա ընթացքում 4-5 անգամ հաջորդում են միմյանց: Պարադոքսալ քնի ժամանակ է, որ մարդը երազներ է տեսնում: Երազներ տեսնելու փուլը կոչվում է REM (Rapid Eye Movement), որը նշանակում է աչքերի արագ շարժում: Երբ քնած ժամանակ մարդու բիբերը արագ է ակտիվ շարժվում են, դա վկայում է այն մասին, որ նա երազ է տեսնում:

Եթե մարդն արթնանում է օրթոդոքսալ քնի ժամանակ, ապա նա իր տեսած երազները չի հիշում, իսկ երբ արթնանում է պարադոքսալ քնի ժամանակ՝ հիշում է:

Անքնությունը քնի խանգարում է, որն էլ բերում է իր ոչ ցանկալի հետևանքները՝ վատ ինքնազգացողություն, որն ուղեկցվում է քնկու-

տությանը, ճնշվածություն, հոգեկան խանգարումներ՝ դյուրագրգռվածություն, տագնապայնություն, տրամադրության անկում, հետաքրքրության անկում շրջապատի նկատմամբ, ընկնում է աշխատունակությունը, ուշադրության կենտրոնացումը, վատանում է հիշողությունը եւ այլն:

Անքնության պատճառները խիստ տարբեր են, եւ սխալ է խնդիրը լուծել, օրինակ, քնաբերներ խմելով: Քնաբերները ապահովում են միայն մակերեսային քուն, մարդը չի անցնում քնի խորքային փուլերին, այդ իսկ պատճառով նա իրեն չի զգում լիարժեք հանգստացած եւ ուժերը վերականգնած:

Որոշ դեպքերում անքնությունը յուրահատուկ դրսևորումներ է ունենում: Քուն մտնել հաջողվում է, բայց երկար քնած մնալ մարդը չի կարողանում, գիշերվա ընթացքում մի քանի անգամ արթնանում է: Քուն մտնելու գիտակցական ջանքերը ոչ միայն չեն օգնում, այլևս խանգարում են, քանի որ էլ ավելի են ակտիվացնում օրգանիզմում ընթացող գործընթացները: Քուն մտնելու օգնում է մկանների թուլացումը, քանի դեռ մարդու մկանները թուլացած չեն, հնարավոր չէ քնել: Դրան կարելի է հասնել ինքնաներշնչման միջոցով: Պետք է ներշնչել, որ վերջույթները տաքանում են, շնչառությունը դառնում է խորը եւ դանդաղ:

Անքնությունն ուժեղանում է, երբ քնելու փորձ կատարողը լարված մտածում է այն մասին, թե ինչպիսի տհաճ հետևանքների է հան-

գեցնելու վատ քնելը հաջորդ օրվա ընթացքում: Նա իր ողջ ուշադրությունը սեւեռում է այն բանի վրա, թե երբ է քնելու, սպասում է քնին, մտածում է, որ արդեն գիշերվա կեսն է, բայց ինքը դեռ չի քնել: «Ահա այսօր էլ չեմ քնի եւ վաղը ինձ շատ վատ կզգամ»: Նմանատիպ մտքերը շարունակում են պատվել ուղեղում:

Այս բոլոր ապրումներն առաջացնում են տագնապի զգացողություն: Իրականում օրգանիզմը պատրաստ է քնելու, իսկ դուք նրան չեք թողնում: Ինչպե՞ս դուրս գալ այս իրավիճակից: Պատասխանը շատ պարզ է. մի՛ տանջեք ձեզ, մի՛ կենտրոնացեք քնելու վրա, փորձեք մտածել ձեզ համար շատ հաճելի բաների մասին: Երեւակայեք, որ դուք գտնվում եք ծովի ափին, լսում եք ալիքների ձայնը, այն հաճելի է եւ հանգստացնում է ձեզ:

Անքնությունն առաջացնող հիմնական գործոններից է սթրեսը, որն ակտիվացնում է նյարդային համակարգը, ինչն էլ խաթարում է քնի բնականոն ընթացքը: Նյարդային համակարգի գրգռված լինելու հետևանքով անձը չի կարողանում թուլացնել օրգանիզմը, լիցքաթափվել եւ հանգստանալ: Ներքին լարվածությունից օրգանիզմում բարձրանում է արյան ճնշումը, նյութափոխանակությունն ակտիվանում է, իսկ քունը դառնում անհասանելի երազանք: Այս վիճակը հաճախ է նկատվում բռնկվող եւ զգացմունքային մարդկանց մոտ: Անքնության պատճառներն են նաեւ ներողը, դեպրեսիան, քնի ռեժիմի խանգարումները, ալկոհոլի, սուրճի, թմրադեղերի չարաշահումը, ծերացումը, քանի որ տարիքի հետ քունը դառնում է ավելի մակերեսային, քնելուց առաջ ակտիվ ֆիզիկական վարժություններ կատարելը, ճոխ ընթրիքը եւ այլն: Քու-

նը հանգիստ գործընթաց է, իսկ մարտդակապ պրոցեսը աշխատանք է: Հնարավոր է, որ լավ ուտելուց հետո կարողանանք քնել, սակայն մեր ստամոքսը կշարունակի աշխատել, որպեսզի մարսի սնունդը եւ, հետեւաբար, նյարդային ազդակներ կզան ուղեղ ու կակտիվացնեն համապատասխան կենտրոնները: Այս ամենի հետևանքով քունը կլինի մակերեսային: Օխողները ճիշտ կանեն, եթե քնից առաջ զլանակը փոխարինեն կանաչ խնձորով կամ երեսուն րոպեանոց զբոսանքով:

Անքնության պատճառ կարող են լինել տարբեր հիվանդությունները, օրինակ՝ լյարդի, երիկամների,



րի, աղիների քրոնիկ հիվանդությունները կամ վահանաձեւ գեղձի գերգործունեությունը: Անքնությունն ունենում են նաեւ կլիմաքսի շրջանում գտնվող կանայք: Պատճառներից է նաեւ օրգանիզմում երկաթի եւ պղնձի անբավարարությունը: Այս խնդիրը հեշտությամբ կարելի է լուծել սննդի միջոցով, հարկավոր է ուտել մուռ, ծիրան կամ ծիրանաչիր, դեղձ, դդում, հնդկածավար, ձկնեղեն, մաղադանոս կամ տավարի լյարդ: Երբեմն անքնության պատճառ է դառնում արյան ցածր ճնշումը. մարմնի վերջույթներին արյունը դժվար է մատակարար-

վում, դրանք սկսում են սառչել եւ քունն իսպառ անհետանում է: Նման դեպքերում կարելի է ուղեղն ընկղմել տաք ջրի մեջ (38-40 աստիճան) եւ անմիջապես պառկել քնելու:

Սովորաբար ուժերը վերականգնելու համար 7-8 ժամը լիովին բավարար է, սակայն տարբեր մարդկանց մոտ քնելու պահանջը տարբեր է, օր.՝ Ա. Էյնշտեյնը քնում էր ավելի քան 10 ժամ, իսկ Վ. Յուզոն եւ Ու. Չերչիլը երբեք չեն քնել 5 ժամից ավել: Քնեք այնքան, որքան դրա կարիքն ունեք: Մեր օրգանիզմը միշտ մեզ տեղեկացնում է, թե ինչ է իրեն անհրաժեշտ: Պարզապես պետք է ուշադիր լսել նրա ձայնը:

Ի՞նչ է պետք անել քնելուց առաջ

- սահմանափակել հեղուկի քանակը,
- խուսափել ակտիվ գործունեության ձեւերից, ցանկալի է քնելուց առաջ լիցքաթափվել կարողալու միջոցով, երաժշտություն լսելու, տաք լոգանք ընդունելով քնելուց մեկ ժամ առաջ,
- ցանկալի է պառկել քնելու ամեն օր միեւնույն ժամին, եթե, իհարկե, ձեր քունը տանում է,
- անկողնում պառկած մի ստիպեք ձեզ քնել, քանի որ դուք ակտիվացնում եք ձեր օրգանիզմը, որն էլ կխոչընդոտի քնելուն,
- ապահովեք սենյակում հնարավորինս հարմարավետ պայմաններ՝ անջատեք լույսը, մեկուսացրեք ձայները, համեմատաբար ավելի ցածր ջերմաստիճան ունեցող սենյակում քնելն ավելի հաճելի է օգտակար,
- մի՛ պառկեք անկողնում արթուն վիճակում կեւ ժամից ավելի:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Ուշադրություն, ճանապարհ է

Հետիոտնի եւ վարորդների միջեւ հակամարտությունը հավանաբար սկսվել է առաջին սայլերի հայտնվելուց ախ: Ի վերջո, վեճը լուծվեց այսպես՝ «Փողոցը՝ տրանսպորտին, մայթերը՝ անցորդներին»: Մեզ մոտ հարգանք են վայելում առավել խոշոր տրանսպորտային միջոցները, բայց անցորդի համար վտանգավոր կարող է լինել նույնիսկ հեծանիվը, եւ որքան բարձր է դրա արագությունը, այնքան մեծ է վտանգը:

Քաղաքներում վրաերթերի թիվը կազմում է ճանապարհատրանսպորտային պատահարների գրեթե կեսը: Հետիոտն, զգոն եւ զգույշ եղիր փողոցում:

Իրավիճակ

Կարգավորողի նշանները

Երբեմն, հատուկ իրավիճակներում (ճանապարհների վերանորոգում, խցանում), լուսացույցը չի աշխատում, եւ փողոցում երթևեկությունը ղեկավարում է ճանապարհային ոստիկանը: Վարորդները հետեւում են նրա հրահանգներին, երթևեկելի մասերում հստակ կարգուկանոն է հաստատվում:

Սակայն, կարգավորողի նշանները հասկանալը կարեւոր է ոչ միայն վարորդների, այլև հետիոտնի համար:

Ոստիկանի դիրքից եւ ձեռքերի շարժումներից կախված՝ ճանապարհը ձեզ համար բաց է կամ փակ: Սուլիչի ձայնը երթևեկու-

թյան բոլոր մասնակիցների՝ վարորդների ու հետիոտնի ուշադրությունը գրավելու համար է:

Ձեր գործողությունները

• Ոստիկանի ձեռքը վեր է պարզած՝ արգելվում է հետիոտնի ու վարորդների շարժը բոլոր ուղղություններով: Խաչներուկը պետք է բաց լինի: Դա կիրառվում է թուլալարված ուղղության փոփոխման դեպքում, ինչպես նաեւ Շտապօգնության, ոստիկանության, հրշեջների մեքենաներին ճանապարհի սուլու համար: Եթե դուք չեք հասցրել անցնել փողոցն այդ ազդանշանից առաջ, ապա մնացեք անվտանգության կոչակում, կամ, դրա բացակայության դեպքում, բաժանարար գծի վրա: Պետք է միշտ հիշել, որ վարորդներին, որոնք ազդանշանից առաջ չեն

հասցրել կանգնել, թուլալարվում է շարունակել երթևեկությունը:

• Կարգավորողը ձեզ դեմքով կամ մեջքով է կանգնած (ձեռքերը կողմ են պարզած կամ իջեցված են)՝ հետիոտնի համար ճանապարհը փակ է:

• Կարգավորողը ձեզ կողքով է կանգնած՝ հետիոտնի ճանապարհը բաց է նրա ձախից եւ աջից՝ երթևեկելի մասի անցումներով: Բայց այդ ազդանշանը թուլալարում է նաեւ տրանսպորտի երթևեկությունն ուղիղ եւ աջ: Այդ պատճառով էլ պետք է փողոցն անցնելուց առաջ ձախ նայել՝ աջ թեքվող մեքենաներից խուսափելու համար: Հիշելը հեշտ է՝ պահեք ձախ կողմը, այնտեղ, որտեղ սիրտն է:

• Ոստիկանի աջ ձեռքը առաջ է մեկնած՝ հետիոտնի կարելի է

անցնել միայն նրա մեջքի հետևում, իսկ առջևից անցնելն արգելված է: Նա կարող է նաեւ հետիոտնին ու վարորդներին հասկանալի այլ հրահանգներ էլ տալ, որոնք մենք պետք է կատարենք, եթե նույնիսկ դրանք տարբերվում են լուսացույցի կամ ճանապարհային նշանների հրահանգներից:

Իրավիճակ

Եթե լուսացույցն անջարված է

Ճանապարհատրանսպորտային կանոններին տիրապետող վարորդները կարող են կողմնորոշվել հիշողությամբ եւ զիջել մյուս վարորդներին: Իսկ ահա հետիոտնի համար ճիշտ գործողություններ կատարելն ավելի դժվար է:

Ձեր գործողությունները

• Հիշե՛ք, թե ինչ էր անում կարգավորողը՝ տրանսպորտի եւ հետիոտնի շարժը կանգնեցնելու համար: Նա բարձրացնում էր ձեռքը եւ վերջ՝ ամեն ինչ կանգ էր առնում: Մենք նույնպես ստիպված ենք կիրառել այդ ժեստը: Հաստատ երաշխիք, որ բոլոր մեքենաները միանգամից կանգ կառնեն,

չկա: Բայց այն, որ վարորդի մոտ կաշխատի ռեֆլեքսն այդ ժեստի հետ կապված եւ նա կդանդաղեցնի ընթացքը, հաստատ է: Առավել եւս, որ պարզած ձեռքով փողոցն անցնելիս մենք ոչ թե կարգազանց ենք, այլ ճանապարհատրանսպորտային կանոնները հարգող օրինավոր քաղաքացի: Մեր տված ազդանշանը կստիպի վարորդին ավելի ուշադիր լինել:

• Եթե անընդհատ ռեժիմով աշխատում է լուսացույցի միայն դեղին գույնը, որը թույլ է տալիս երթևեկությունը հատուկ զգուշավորությամբ, մենք մայթին կանգնած բարձրացնում ենք ձեռքը: Դրանով մենք մոտեցող վարորդին գուշացնում ենք, որ պատրաստվում ենք անցնել փողոցը: Եթե տրանսպորտը ձախից մոտեցել է մոտ 100 մ, ապա մենք կարող ենք առաջ շարժվել՝ ձեռքը բարձրացրած: Այդպես մենք կարող ենք անցնել փողոցի կեսը: Եթե մեքենան ավելի մոտ է, մենք ռիսկի չենք դիմում եւ սպասում ենք քաղաքավարի վարորդի, որը մեզ թույլ կտա անցնել: Անցնողների թվի մեծանալը անցնելու շանսերը կե՛ստացնում է: Նույն կանոնները կիրառելի են չվերահսկվող անցումների համար:



Փրկեք մեր հոգիները, թե՛ կետեր-գծիկներ-կետեր

Ճովում տեղի ունեցող աղետի մասին առաջին ռադիոազդանշանը տրվել է 1899 թ. հունիսի 17-ին: Հենց այդ օրը Լա Մանչ նեղուցում ծանծաղուտի վրա է նստում «Էլբա» առևտրային նավը: Ողբերգությունից ոչ այնքան հեռու գտնվող նավի մի հեռագրավոր էթերով հայտնում է, որ այստեղ կան մարդիկ, որոնք օգնության կարիք ունեն: Բայց դա դեռ աղետի միասնական ու միջազգային ընդունված ազդանշան չէր: Նման ազդանշան ունենալու խնդիրն արդեն բնարկվում էր տարբեր շրջանակներում: Կային աղետի բազմաթիվ ազդանշաններ, որոնք հաղորդվում էին տարբեր միջոցներով՝ ձայնային ու տեսողական, լուսային, դրոշակների, կրակի, զանգերի, ծխի եւ այլն: Բայց անհրաժեշտ էր գտնել մեկ պարզ ազդանշան, որը հասկանալի կլիներ բոլորին:

SOS օգնության միջազգային ընդունված կանչը հայտնի է բոլորին, սակայն քչերը գիտեն, թե որտեղից է այն առաջացել:

103 տարի առաջ՝ 1906 թ. նոյեմբերի 3-ին Բեռլինում իր աշխատանքն է ավարտում 3-րդ միջազգային ռադիոհեռագրային գիտաժողովը, որին մասնակցում էին 29 երկրի ներկայացուցիչներ: Օրակարգի ամենակարեւոր հարցն աղետի ժամանակ միասնական միջազգային ազդանշան որոշելն էր, որը պետք է հաղորդվեր Մորզեի այբուբենով, քանի որ այն կիրառվում էր եւ՛ մալուխային, եւ՛ ռադիոկապի դեպքում: Արդյունքում՝ գիտաժողովի ավարտին ստորագրվում է մի հռչակագիր, որի 14-րդ հոդվածում ամրագրվում է. «... օգնություն խնդրելու համար խորտակվող նավերը պետք է կարճ ընդմիջումներով պարբերաբար հաղորդեն SOS, այսինքն ըստ Մորզեի այբուբենի՝ «... - - - - -»

(3 կետ, 3 գծիկ, 3 կետ) ազդանշանը»:

Դեռեւս 1903 թ. տեղի ունեցած առաջին միջազգային ռադիոհեռագրային գիտաժողովի ժամանակ Իտալիան ներկայացնող նավապետ Կլինտոն Բոնոմոն առաջարկում է նավաբեկության ենթարկվող բոլոր նավերին հաղորդել SSS DDD, այսինքն՝ «... - - - - -» ազդանշանը: Նրա առաջարկությունը չի ընդունվում, սակայն գիտաժողովի՝ օգոստոսի 13-ին ստորագրված արձանագրության մեջ ամրագրվում է, որ հեռագրերի ոչ մալուխային կայանները, հնարավորության դեպքում, պետք է առաջնահերթությունը տան ծովում խորտակվող նավերից ստացված ազդանշաններին:

Հաջորդ գիտաժողովին, որը կայանում է երեք տարի անց, առաջինն առաջարկությամբ հանդես է գալիս իտալական «Մարկոնի» ընկերությունը: Այն դեռեւս երկու տարի առաջ իր ներքին կամուրջարգրում սահմանել էր, որ «Մարկոնի» ռադիոհեռագրային ապարատներով սարքավորված նավերում աղետի ազդանշանը CQD-ն է: Սրա հիմքում հեռագրավարներին հավաքող ընդհանուր կանչն էր՝ CQ-ն (անգլերեն՝ come quick - արագ մոտեցիր արտահայտությունից), իսկ D տառն ավելացել էր կրկին անգլերեն՝ distress-աղետ բառից: Այսպիսով ստացվում էր. «Արագ մոտեցիր, աղետ է»:

Ամերիկացիները դեմ են արտահայտվում այս առաջարկությանը՝ պատճառաբանելով, որ ընդամենը մեկ տառի փոփոխությունը հաճախ կարող է թյուրիմացության մեջ զգել հեռագրավարներին: Նրանք իրենց հերթին առաջարկում են որպես միջազգային ազդանշան ընդունել ԱՄՆ ռազմածովային ուժերում օգտագործվող, դրոշակների այբուբենով արտահայտվող, որն ընդամենը տառերի հավաքածու էր. «Իսկ ինչ կլինի», եթե E-ն փոխարինենք S-ով, - հարցնում են գերմանացիները: «Հոյակապ կլինի», - մտածում է գիտաժողովի մասնակիցների մեծ մասը: Գերմանական ընկերության առաջարկն ընդունվում է համարյա միաձայն:

Այսպես էլ ծնվում է բոլորին լավ հայտնի SOS աղետի ազդանշանը՝ 3 կետ, 3 գծիկ, 3 կետ՝ Մորզեի այ-

բուբենով, որն ընդամենը տառերի ու նշանների շատ հարմար հավաքածու է հեշտ հիշելու համար, այլ ոչ թե բառերի հավաքածու: Իսկ աղետի միջազգային ազդանշանը բովանդակային իմաստ է ստացել... լրագրողների թեթև ձեռքով:

Գիտաժողովի մասնակիցների շրջանում ամենից շատ հետաքրքրություն է առաջացնում գերմանական «Սյաբի-Արկո» ընկերության տարբերակը՝ SOE-ն (... - - - -): Այն, կարծես, միայն մի թերություն ուներ: Մորզեի այբուբենում E տառը



գրվում է մեկ կետով, իսկ երկար տարածության վրա, այն էլ ծանրաբեռնված եթերում այդ մեկ կետը կորցնելն ու հաղորդագրության իմաստը խեղաթյուրելը չափազանց հեշտ էր: «Իսկ ինչ կլինի», եթե E-ն փոխարինենք S-ով, - հարցնում են գերմանացիները: «Հոյակապ կլինի», - մտածում է գիտաժողովի մասնակիցների մեծ մասը: Գերմանական ընկերության առաջարկն ընդունվում է համարյա միաձայն:

Այսպես էլ ծնվում է բոլորին լավ հայտնի SOS աղետի ազդանշանը՝ 3 կետ, 3 գծիկ, 3 կետ՝ Մորզեի այ-

բուբենով, որն ընդամենը տառերի ու նշանների շատ հարմար հավաքածու է հեշտ հիշելու համար, այլ ոչ թե բառերի հավաքածու: Իսկ աղետի միջազգային ազդանշանը բովանդակային իմաստ է ստացել... լրագրողների թեթև ձեռքով: Գիտաժողովի հաջորդ օրը, դրա արդյունքները լուսաբանող մամուլի էջերում լրագրողներն արդեն ընդունված աղետի ազդանշանին ավելացնում են իրենց մեկնաբանությունները, որոնց տարբերակները բավական շատ են.

- Save Our Souls (Spirits) - փրկեք մեր հոգիները.
 - Save Our Ship - փրկեք մեր նավը.
 - Survivors On Ship - փրկվածները նավի վրա.
 - Swim Or Sink - լողացեք, թե չէ կխեղդվեք.
 - Stop Other Signals - դադարեցրեք մյուս ազդանշանները:
- Առաջին անգամ SOS ազդանշանը եթերում հնչում է 1909 թ. հունիսի 10-ին, երբ Ադրյան կղզիների մոտակայքում ժայռերին է բախվում Նյու Յորքից Տրիեստ ուղևորվող «Սլավոնիա» տրանսատլանտյան խոշոր նավը: Այդ ժամանակից ի վեր այս պարզ ու հասարակ ազդանշանի շնորհիվ հարյուր հազարավոր մարդիկ են փրկվել ու դեռ շատերը կփրկվեն...

Մայիսյան օր կամ օգնեցեք

Ռադիոհեռախոսային կամ, այսպես ասած, ձայնային կապի մեջ SOS-ի համարժեքն է «Մեյդեյ»-ը: Աղետի այս ազդանշանն օգտագործվում է միայն այն դեպքերում, երբ վտանգ է սպառնում անմիջապես մարդկային կյանքին՝ խորտակվող նավերի, վթարի ենթարկվող օդանավերի, հրդեհների, պայթյունների եւ այլ աղետների դեպքում: Ազդանշանը հաղորդ-

վում է երեք անգամ, իրար հետեւից, որպեսզի թյուրիմացությունները բացառվեն:

1923 թ. աղետի ազդանշանի այս տարբերակն առաջարկել է Լոնդոնի Կրոյդոն օդանավակայանի ավագ ռադիոհեռագրավար Ֆրիդրիխ Սթենլի Մոկֆորդը: Նրան խնդրել էին ստեղծել այնպիսի ազդանշան, որը չչփոթեն սովորական ռադիոհաղորդագրությունների հետ եւ հեշտ հասկանալի վատ ռադիոկապի դեպքում: Անգլերենից բառացի թարգմանությամբ սա նշանակում է «Մայիսյան օր» (Mayday): Հնչողությամբ այն շատ նման է ֆրանսերեն venez m'aider արտահայտության կրճատ տարբերակին, որը նշանակում է «Եկեք ինձ օգնության կամ օգնեք ինձ»: Հետաքրքիր է, որ առօրյա հաղորդակցության ժամանակ ֆրանսիացիները վտանգ զգալու դեպքում այլ արտահայտություն են օգտագործում: Մոկֆորդն ընտրում է հենց այս բառերը, որովհետեւ այն ժամանակ լոնդոնյան օդանավակայանից թռիչքների զգալի մասը Փարիզ էր ուղևորվում:

«Մեյդեյ» կարող է հաղորդվել ցանկացած հաճախականությամբ, սակայն, որպես կանոն, գոյություն ունեն հատուկ աղետի ազդանշանների համար առանձնացված հաճախականություններ, որոնցով արգելված է այլ բովանդակության հաղորդագրություններ փոխանցել: Փրկարարական, ծովային ու օդային երթևեկությունը կարգավորող ծառայությունները մշտապես հետևում են դրանց՝ պատրաստ արձագանքելու: Եթե փրկարար ծառայությունից չեն հաստատում, որ նման կանչ են ստացել, ապա յուրաքանչյուր, ով լսել է, պարտավոր է կրկնել աղետի ազդանշանը՝ համոզված լինելու համար, որ այն կհասնի փրկարարներին:

Գոհար Բաղդասարյան

Հայրարարություն

Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

1. Պետական հրդեհային տեսչության Լոռու մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.2-27)
2. Պետական հրդեհային տեսչության Լոռու մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.2-28)
3. Պետական հրդեհային տեսչության Վայոց Ձորի մարզային հրդեհային տեսչության տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.2-29)

գետ (ծածկագիր՝ 34/1-4.2-42)

Մասնակցում է Բաժնի առջև դրված գործառնություններից բխող խնդիրների վերլուծությանը եւ զննահատմանը: Իրականացնում է հրդեհատեխնիկական հետազոտություններ, հաշվառում է սպասարկման տարածքում գտնվող օբյեկտների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը եւ դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ գեկուցումներ է նախապատրաստում: Իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ հաշվետվություններ, գեկուցագրեր եւ այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 24.12.2009 թ., ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- Այս կետում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ անհրաժեշտ ծրագրային այլ միջոցների տիրապետում,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշխատակազմ (ք. Երեւան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ծեւը լրացվում է փաստաթղթերը ներկա-

- յացնելիս),
 - տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
 - արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
 - անձնագրի պատճենը:
- ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչեւ 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 20.11.2009 թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երեւան, Պուշկինի 25, հեռ. 53-07-87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:



արտակարգ ժամանց

Իգնորեյան մրցանակի 2009 թ. դափնեկիրները

Ղատարկ, թե՛ լիբը

Այս տարի Իգնորեյան խաղողության մրցանակը ստացել են մի խումբ շվեյցարացի հետազոտողներ: Նրանք փորձել են պարզել, թե երբ է ավելի շատ ցավում գլուխը՝ երբ խփում են գարեջրի դատարկ



22ով, թե՛ լիբը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դատարկ 22երն ավելի ամուր են, հետևաբար՝ հարվածն էլ ավելի «արդյունավետ» է ու վտանգավոր, սակայն գլխին լուրջ վնասվածքներ կարելի է հասցնել թե՛ դատարկ, թե՛ լիբը 22ով հարվածելիս:

Պարզապես լիբը 22ով հարվածելը տնտեսապես ձեռնտու չէ...

Շնչադիմակը՝ միշտ քեզ հետ

Առողջապահության բնագավառում սահմանված մրցանակը հանձնել են Միացյալ Նահանգներում բնակվող եւ հրաշք-կրծկալի գյուտն արտոնագրած Ելենա Բողնարին: Նա



ծագումով ուկրաինուհի է, եւ կրծկալ շնչադիմակներ ստեղծելու գաղափարը նրա գլխում ծագել է Չեռնոբիլի ատոմակայանում 1986 թ. տեղի ունեցած սարսափելի աղետից հետո: «Դրա շնորհիվ վտանգի դեպքում շնչադիմակը միշտ ձեռքի տակ կլինի», - լրագրողներին ասել է Բողնարը:

Բայց այստեղ, կարծես, սեռական խտրականության կա: Նմանօրինակ շնչադիմակներ

ըր հասանելի են ու, միգուցե նաեւ, կիրառելի միայն կանանց համար: Ելենայի տրամաբանությանը հետեւելով՝ օրինական հարց է ծագում. ի՞նչ են անելու տղամարդիկ ճառագայթային վթարի դեպքում:

Նաշվել, հաշվել մինչեւ վերջ

Մաթեմատիկայի ոլորտում աչքի է ընկել Ջիմբաբվեի ազգային բանկի ղեկավար Գեդեոն Գոնոն: Նրա նախաձեռնությամբ թողարկվել են մեկ սենթից մինչեւ հարյուր տրիլիոն



դոլար արժողությամբ թղթադրամներ: Շնորհեյան մրցանակաբաշխության հանձնաժողովը նշել է, որ դրանով նա մարդկանց հնարավորություն է տվել ամեն օր մաթեմատիկական վարժություններ անել՝ կապված թվերի այդպիսի մեծ քանակության հետ:

Ոսկե ցլին ու Մադիկ կովը

Անասնաբուժության ասպարեզում մրցանակ են ստացել բրիտանացի գիտնականները: Նյութասի համալսարանը ներկայացնող Քեթրին Դուգլասը եւ Փիթեր Ռոուլինսոնը իրականացրել են մի հետազոտություն, որի արդյունքում պարզվել է, որ մականուն ունեցող կովերն ավելի շատ կաթ են տալիս, քան անանունները:

Վարորդական վկայական

Գրականության մրցանակը կիսվել է իռլանդացի բոլոր ոստիկանների միջեւ, որոնք շուրջ հիսուն անգամ տուգանվել են Պրավո Յազդի անու-



նով, ազգությամբ լեհ մի վարորդի: Խեղճի անունը լեհերեն նշանակում է «Վարորդական իրավունք»:

Մեծ ու փոքր

Այս տարի, առավել քան արդիական տնտեսագիտության ոլորտում Իգնորեյան մրցանակ են շահել իսլանդական միանգամից չորս բանկերի ղեկավարներն ու աուդիտորները: Նրանք ցույց են տվել, թե «ինչպես փոքր բանկերը կարող են շատ արագ վերածվել խոշորների եւ հակառակը»: Իսլանդացիները նաեւ պնդում են, որ նման բանկարող է տեղի ունենալ ամբողջ ազգային տնտեսության հետ:

Մարիկը սխալվում էր

Առողջապահության մրցանակը շնորհվել է ամերիկացի բժիշկ Դոնալդ Ունգերին: Նա վաթսուներորդի շարունակ ամեն օր ճտացնում էր ձախ ձեռքի մատների հողերը, որպեսզի ստուգի, թե արդյոք դա կարող է հանգեցնել արթնիտի:

Փոքր ժամանակ մայրը նրան արգելում էր նման բան անել՝ ասելով, որ դրա պատճառով Դոնալդը կարող է հոդերի հիվանդություն ստանալ: «Վաթսուներորդի անց ես մայրեցի իմ մատներին եւ արթնիտի մշույլ իսկ չտեսա», - «Գարդիան» թերթին ասել է 83-ամյա Ունգերը, - այդ ժամանակ ես աչքերս հառեցի երկնքին ու ասացի՝ մայրիկ, դու սխալվում էիր»:

Իսկապես որ, դրա արդյունքում Դոնալդ Ունգերը հոդերի հիվանդության փոխարեն Շնորհեյան մրցանակ ստացավ:

Օդին եւ ավմաստները

Քիմիայի բնագավառում մրցանակը հանձնվել է մի խումբ մեքսիկացի հետազոտողների, որոնք կարողացել են կակտուսի օդուց՝ տեկիլայից ավմաստ ստանալ:

Իսկապես որ, ակտիոնի սիրահարների համար օդին քաշով մեկ աղանաղ է:

Հույն փիլիսոփա Պլոնի համաձուլվածք	Չկապակցված, չառնչվող, անհամատեղելի	Գինու տեսակ	Լկտի, անպատկառ	Մարվորնա Նոր հանդես եկած	Խորհրդային անվանի ջութակահար	Կերպարվեստի ստեղծագործություն
... Բենդեր	Հայոց թագավոր	Ղատարկ, խելացի	Խենթ, ցնորված	Թռչուն Պաշտպան, օգնող	Արվեստի գործիչների հովանավոր	Չառիվեր
Հրաձգարան ... Եզնավորյան			Մեղաճակատ ... Բոյաջյան			
Ազգային հազուտ Ավագակ, ասպատակ				Մարգարեական խաղ Բուք, ճկույթ		
			Քիչ թաց, խոնավ Չենարան, պաշտպան			Եռանկյունաձևական ֆունկցիա
Արմեն Ձիգարխանյան	Նակի քիթը Թատերական ներկայացում					... Պաուլու
	Գլխանոցի տեսակ եկեղեցական			Թումանյան «Ին ընկեր ...» Նոտա		
		Ուղտի անճարտահայտիչ մասը		Ղրղզների եպոսը		
	Քրիստոսի հակառակորդը			Հայկական դիցուհի Կովկասի գերուհին		
	Հին հայկական ամսանուն	3.14				
	Հայ գրող Դեռնդ ...	Հուն. դից. մեքսիկացի թագավորությունը				

